

ԱՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

● ԿԵՎՐԻ ՀԱԿԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական փառատոնի առիթով սյս օրերին Դայաստանում է գունդում սփյուռքահայ անվանի լուսանկարիչ ու ռեժիսոր Պոլ (Փոլ) Գալինյանը իր «Կիյամ Սարոյան» մարդը, գրողը՝ փաստավավերագրական ֆիլմը հայրենիքում ցուցադրելու նվիրական փափագով: «Բարի հսկայի» մասին ֆիլմը (ինչպես նրան անվանել է Կահսագն Դավթյանը), շրջել է աշխարհի տարբեր երկրներում, շահել հեղինա-



կավոր 6 մրցանակներ և այդ թվում Ֆիլմադելֆիայի միջազգային փառատոնի լավագույն վավերագրական ֆիլմի համար սահմանված «Դակե մրցանակը»: Սեպտեմբերի 17-21-ը ֆիլմն առաջին անգամ կցուցադրվի Դայաստանում «Առողջական» կինոթատրոնում:

Ամիսներ առաջ մեր թերթի «Սփյուռքահայ կինոգործիչները» շարքում Արծվի Բախչինյանը, ներկայացնելով Պոլ Գալինյանին, նաև ցավ եր հայտնել, որ նրա ֆիլմը տակալին չի ցուցադրվել հայրենիքում: Այսօր, երբ ուր-որ է կիրականանա Պոլ Գալինյանի այդ նվիրական երազանքը, տպագրում ներ Կարո Վարդանյանի գրույցը մեր հայրենակցի հետ: Ու թեպետ որոշ մանրամասներ վերը նշված հրապարակումից արդեն ծանոթ են մեր ընթացողներին, հաշվի առնելով որանց հետաքրքրական լինելը, գրույցը տպագրում ենք ամբողջությամբ:

- Պրեն Գալինյան, ուրախ ենք, որ վերջապես Դայաստանում եք: Մի փոքր պատմեք ձեր մասին:

- Ծնվել եմ 1932թ. փետրվարի 14-ին, Բեյրութում խարբերդից Դրանդի եւ մարաշից Դայկուհու ընտանիքում: Դետագայում ընտանիքս տեղափոխվեց Դամասկոս, ուր եւ ստացա նախնական կրթությունս եւ անցկացրի երիտասարդությունս: Կաղ տարիից փափագում էի լուսանկարիչ դառնալ եւ շնչին աշխատավարձով մտա Դամասկոսի «Ֆուտո Կոլլաբենկ» արհեստանոցը, ինքնաշխատությամբ սովորեցի լուսանկարչական արհեստը: 1961-ին Բեյրութում բացեցի ին առաջին «Ֆուտո Պոլ» լուսանկարչական արհեստանոցը: 1964-ին տեղափոխվեցի Կանադա՝ Մոնրեալ, այնուհետեւ ԱՄՆ, որտեղ 1967-ին ավարտեցի Նյու Յորքի լուսանկարչական ինստիտուտը: Նույն թվականին էլ Ֆրեզնոյում հիմնեցի «Պոլի լուսանկարչական ստուդիան»:

Իմ լուսանկարների հերոսները նշանավոր մարդիկ են: Այդ լուսանկարները տպագրվել են բազմաթիվ թերթուում, գրքերում, ԱՄՆ-ի թողարկած դրոշմանիշների վրա: Դրանցից շատերը ցուցադրվել են բանգարաններում եւ այլուր:

- Ձեր աշխատանքներում հատուկ տեղ են գրադեցում Կիյամ Սարոյանին պատկերող լուսանկարների շարքերը: Որտե՞ղ, ի՞նչ հաճամանքներում ծանոթացաք մեր աշխարհահոլակ հայրենակցի հետ, ինչպես սկսվեց ձեր մտերմությունը:

- Լուսանկարչության ասպարեզ ուղը դնելու առաջին իսկ օրից երազել եմ հանդիպել եւ նկարել Կիյամ Սարոյանին: Այդ նպատակով տասներկու տարի ապարդյուն որոնել եմ նրան, եւ ահա, 1976-

ի մարտի 26-ին վերջապես բախտն ինձ մպտաց: Այդ օրն առավոտյան ընկերու քանդակագործ Կառագ Սամվելյանը, հեռածայնեց եւ ասաց, որ Սարոյանը Ֆրեզնոյում է եւ այցելելու է իր արվեստանոցը: Անմիջապես գնացի այնտեղ, տեղադրեցի լուսանկարչական ապարատս, հարմարեցրի լույսերը եւ սկսեցի անհամբերությամբ սպասել: Այդ քանի ժամ անց Սարոյանը եկավ: Տեսնելով ապարատը՝ սաստեց ինձ: «Կորսու՛, չեմ ուզեր»: Տեւական խնդրանք-աղաշանքներս գուր անցամ: «Ոչ, ըստի, ականջդ ծա՞նը է. ինչ է: Որեւ նկար չեմ ուզեր»:

Ստիհաված է իսորամանկել: Սինչ նա զնոնում էր վարագի քանդակները, բազմիցս գաղտնի չըխկացողի ապարատը: Որոշ ժամանակ անց, իմանալով, որ բեյրութցի եմ, Սարոյանը խնդրեց պատմել Լիբանանի հայության մասին: Դետո միասին երգեցինք «Կիլիկիա» երգը, որի ընթացքում «բարի հսկայի» աշքերը արցունքով լցվեցին: Երգից հետո Սարոյանն ասաց, «Թեզ հավմեցա, Փոլ, իհմա ուզածի շափ կրնաս նկարս քաշել»:

Երկու շաբաթ անց, այցելելով արհեստանոցս, տեսավ իր լուսանկարները պատից կախ եւ հուզվեց: «Դեմքս այդպիսի արտահայտության մեջ երթեք չեմ տեսած»: Դետո նվիրեց իր «Մի երթար, բայց եթե երթաս, բարեւ տար ամենուն» գիրը հետեւյալ մակարությամբ. «Փոլ Գալինյանին մեծ լուսանկարիչ արվեստագետին»: Այսպես դրվեց մեր բարեկամության սկիզբը: Լուսանկարներից լուսադրությամբ գունվող Կիյամ Սարոյանի բանգարանում:

- Ինչ ինչպես ծնվեց ֆիլմը:

- 1981-ին, մեծ գրողի մահվանից հետո, աշխարհի բոլոր ծայրերից մարդիկ սկսեցին հետաքրքրվել Սարոյանին պատկերող իմ լուսանկարներով: Պատրաստեցի 10 րոպե տետրությամբ մի ֆիլմ «Ինչպես նկարեցի Սարոյանին» խորագրով, որը ամեն ցուցադրությունից հետո ավելի ու ավելի մեծ արձագանք էր գտնում: Դա դրդեց, որ ամրողով վիճակը նվիրվեմ Սարոյանի կյանքն ու գործն ուսումնասիրելուն: Կեց տարի շարունակ հավաքեցի նրան վերաբերող մատելի աղյուրները, նորոգեցի հին լուսանկարները, գտեցի ու խմբագրեցի գրողի ծայրը, հայրայթեցի տեսաերիկային եւ շարժանկարային հատվածներ Խորհրդային Դայաստանից, ուր եղել է Սարոյանը, հարցազրույցներ ունեցել: Խորոգեցի դրանք, բարձրացրի որակը, եւ այդ ամենի արդյունքում 1991-ին ստեղծվեց «Կիյամ Սարոյան. մարդը, գրողը» մեկ ժամ տեղությամբ ֆիլմը անգլերեն լեզվով, ենթախորհրդական անգամ հայերենով: Նկարված է գունավոր, սրբագույն եւ սեւ-ճերմակ:

- Փաստորեն, դուք կերտել եք Սարոյան-մարդու համահավաք դիմանկարը: Ո՞րն էր ձեր ելակետը Սարոյանի բազմաբարդ ու նրբին ներշխարհը ներկայացնելիս:

- Սարոյանն աշխարհին պատմեց հայերի մասին: Միջազգային ճանաչում բերեց իր ժողովրդին այն ժամանակ, երբ այդ ժողովուրդը ցրված էր աշխարհով մեկ եւ ամենուր հանդիպում էր խորության: Ամենայն հավանականությամբ, Սարոյանը հայ ժողովրդի ծոցից ելած ամենանշանակուր դեմքն է, որը դրսում պանծացրեց իր ազգը:

Սարոյանի ստեղծագործության մեջ առկա է սերը, որ նա տածում էր թե իր ծննդավայրի հանդեպ՝ իբրև ամերիկացի, եւ թե իր նախնաց հայունիքի հանդեպ՝ իբրև հայ: Նա շեշտում էր իր ստացած մշակութային ժառանգության կարեւությունն ու ազդեցությունը իր որպես գրողի ծեսավորման գործում: Նա մերժում է որամը, համարվը, փառքը, վերադառնում դեպի իր արմատները, ուր եւ գտնում է վերջնական հանգիստ:

- Մի փոքր էլ ձեր ֆիլմի մասին:

- Ֆիլմը սկսվում է 1900-ականների Ֆրեզնոյի մասին ակնարկով եւ ընդգրկում 80 տարվա պատմություն՝ մինչեւ գրողի մահը (1981): Ֆիլմի սկզբում Սարոյանը վերիշշում է իր անցյալը, ապա Գրիգոր Օհանյանը պատմում է նրա 60 տարվա գրական վաստակի մասին՝ հիմք ունենալով ամենատարբեր աղյուրներ... Երաժշտությունը գրել է Փոլ Լազլիկյանը, գծանկարները Սարգիս Սուրայյանին են:

Ֆիլմը նպատակ ունի ներկայացնել Կիյամ Սարոյանին, նրա գործերը, որպեսզի մեր եւ գալիք սերունդները ճանաչեն, գնահատեն նրան...